



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԱՏ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏԲ ՉՈՐՐՈՐԴ ԿՐԻԱԿԻ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Աստուածաշնչական Ընթերցումներ	Էջ 1
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	Էջ 3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 25)	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԻԿԷՆ (19.1-11)

Ահա Տէրը թեթեւագնաց ամպի վրայ նստած Եգիպտոս պիտի գայ: Անոր դիմաց Եգիպտոսի կուռքերը պիտի դողան, եգիպտացիներու սիրտը պիտի հալի: Եգիպտացիները եգիպտացիներուն դէմ պիտի ելլեն, եղբայրը եղբօր դէմ պիտի պատերազմի եւ ընկերը՝ իր ընկերոջ դէմ, քաղաքը քաղաքի դէմ եւ թագաւորներ թագաւորներու դէմ: Եգիպտացիներ իրենց հոգեկան կորույժ պիտի կորսնցնեն, որովհետեւ անոնց ծրագիրները պիտի խառնեն, ուստի անոնք խորհուրդ պիտի ուզեն իրենց աստուածներէն ու կուռքերէն, ոգեհարցներէն ու վճուկներէն: Խստասիրտ տէրերու ձեռքը պիտի մատնեն գիրենք, անգութ թագաւորներ պիտի տիրեն անոնց, - կ'ըսէ Երկնային Զօրքերու Տէրը: Եգիպտացիներ գետափեայ ջրակոյտերէն պիտի խմեն իրենց ջուրը, որովհետեւ Նեղոսը պիտի նուազի ու ցամքի: Նեղոսէն բացուած առուները պիտի ճահճանան եւ ամբողջ գետը պիտի ցամքի. բոլոր մարգագետինները, եղէգնուտներն ու պրտուի շամբուտները եւ մամուռով պատուած մարգագետինները պիտի չորնան: Նեղոսի շուրջը ածած ամէն կանաչութիւն, եւ գետեզրին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորնան: Նեղոսի ձկնորսներն ու բոլոր կարթընկէցները պիտի տրտմին ու հեծեն, ցանցորդներն ու ուռկանաւորները սուգ պիտի ընեն: Նրբահիւս կտաւագործները ու բեհեզ գործողները պիտի անճրկին, բոլոր վարպետ արհեստաւորները եւ գարեջրագործները պիտի տրտմին եւ յուսալքուին: Արդարեւ յիմար են Տայանիսի իշխանները, փարաւոնին իմաստուն կոչուած խորհրդականները, որոնք յիմար խորհուրդներ կու տան:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (2.1-10)

Այնուհետեւ, տասնըչորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բառնաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ երթամ: Այնտեղ Երուսաղէմի եկեղեցիին զեկոյց տուի հեթանոսներուն մէջ կատարած քարոզութեանս մասին: Առանձնաբար զեկոյց տուի նաեւ եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի իմ ուղղութեանս մասին իրենց հաւանութիւնը ունենամ, եւ զուր տեղ աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին որ թլփատուի ինծի ընկերացող Տիտոսը, որ հեթանոսութենէ կու գար: Թլփատութիւն պահանջողները քանի մը կեղծ քրիստոնեաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսիսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլաք թէ ճշմարիտ էր ինչ որ ձեզի քարոզեցինք:

Գալով անոնց որոնք եկեղեցւոյ ղեկավարները կը համարուէին, ինծի համար բնաւ կարեւորութիւն չունի թէ անցեալին ի՛նչ եղած են անոնք: Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դնել: Արդ, ղեկավար համարուած այդ առաքեալները ոեւէ նոր բան չըսին ինծի այդ մասին: Ընդհակառակը, երբ տեսան թէ Աստուած ինծի վստահած է հեթանոսներու քարոզութիւնը - որովհետեւ Աստուած ինչպէս Պետրոսի առաքելութիւնը յաջողցուց հրեաներուն մէջ, նոյնպէս ալ իմ առաքելութիւնս յաջողցուց հեթանոսներուն մէջ -, այն ատեն Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք եկեղեցւոյ

Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դնել:

սիւները կը համարուէին, ճանչցան Աստուծոյ
ինծի տրուած շնորհքը, իմ եւ Բառնաբասի
ձեռքը թօթուելով հաւանութիւն տուին որ մենք
հեթանոսներուն մէջ աշխատինք, իսկ իրենք՝
հրեաներուն: Միայն խնդրեցին որ Երուսաղէմի
աղքատներուն օգնել չմոռնանք. բան մը, որուն
համար ես սրտանց աշխատեցայ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(12.35-44)**

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու
ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի
ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել թէ Քրիստոս,
խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է,
երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիով ներշնչուած
կ'ըսէ.

“Տէրը ըսաւ իմ Տիրոջս.–

աչ կողմս նստէ,

մինչեւ թշնամիներդ ոտներուդ տակ դնեմ
որպէս պատուանդան”:

«Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս
ուրեմն Քրիստոս անոր որդին է»:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի,
որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր.
«Զգո՛յ՛ յեղէք օրէնքի ուսուցիչներէն որոնք
կը սիրեն փառաւոր զգեստներով շքեղ,
հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիր
բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ
առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու
ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ
այրիներուն տունները անոնց ձեռքէն կը
յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ
իրենց աղօթքը կ'երկարեն: Ասոր համար աւելի
խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ
եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր
գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ
գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ
եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան
կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները
եւ ըսաւ անոնց. «Վստա՛հ գիտցէք, որ այս
թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ
գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց
աւելորդ գումարներէն նետեցին, մինչ անիկա,
հակառակ չքաւոր ըլլալուն, ինչ որ ունէր՝
նետեց, իր ամբողջ ապրուստը»:

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿՊՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԳՐԱՆԵՆԵԱՎ՝
514 331 5445 x202 ԹԻԻՆ**

ՍՈՅՆ ԹԵՐԹԻՐ
ՇԱՔԱԹԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՄ
Ե-ԱՆՈՒԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԵՅԷՔ
eglise@sourphagop.net Ե-ՀԱՍՅԷՆԱ:

**ԱՅԵԼԵՅԷՔ ԵԿԵՂԵՅՈՅ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ ՁԵՐ ՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՍԵՆԵՅԷՔ
(like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal**

**ԱՅԵԼԵՅԷՔ
Ս. ՅԱՍՐ ԱՌԱՋԱՆՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՅԷՁՆ՝
www.sourphagop.net**

**ԱՅԵԼԵՅԷՔ
Ս. ՅԱՍՐ ԱՌԱՋԱՆՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՅՈՅ YouTube ԿԱՅԱՆ՝
ՓԱՏՆԵԼՈՎ
Sourp Hagop Armenian Church**

Անդրադարձներ Եւ Խորհրդածուրթիւններ

Ս. Իսաչին նուիրուած տօներու ժամանակին մէջն ենք. Իսաչվերաց, Վարազի Ս. Իսաչ, Գիւտ Ս. Իսաչի: Հայ եկեղեցին Ս. Իսաչին նուիրուած այլ տօն մըն ալ կը կատարէ Համբարձումէն առաջ. անունն է Երեւում Ս. Իսաչի: Ասոնցմէ գլխաւորը համարուած է Իսաչվերացը: Իսկ միայն Վարազի Ս. Իսաչին տօնն է, որ իւրայատուկ է Հայ եկեղեցւոյ: Տօներուն համար աւանդաբար սահմանուած Ս. Գրային քաղուածքներուն առանցքային տարրը՝ Աստուծոյ իմաստութիւնն է:

Ընդհանրական Եկեղեցին սկիզբէն գՔրիստոս ճանչցաւ որպէս մարմնացեալ եւ մարդացեալ աստուածային Բանը: Այս աստուածային Բանը, որ թէւ Յովհաննէսի աւետարանին մէջ յունարէն «լոգոս»ով արտայայտուած է, բայց բոլորովին տարբեր է յունական փիլիսոփայութեան եզր «լոգոս»էն: Տարբերութիւնը անոր մէջ է, որ Յովհաննէսի «լոգոս»ը իր մէջ ունի Ս. Գրային իմաստութեան բովանդակութիւնը: Ս. Գրային իմաստութիւնը միայն լոյս մը չէ,

միայն ճշմարտութիւն մը չէ, այլ կենսաստեղծ, կենսատու, փրկող զօրութիւն լոյսնէ. կենսաստեղծ, կենսատու, փրկող զօրութիւն ճշմարտութիւնն է: Անոր մօտենալը՝ վերստեղծուիլ է կեանքին մէջ, հաղորդակից ըլլալ է աստուածային կեանքին, ընդ Աստուծոյ ըլլալ է ժամանակին մէջ, բայց ժամանակէն վեր:

Ս. Իսաչի տօներով՝ ա՛յս իմաստութիւնը կը խոստովանուի:



Իմաստութեան սկիզբը Աստուծոյ երկիւղն է, կ'ըսէ Առակներու գիրքը: Պօղոս առաքեալ Քրիստոսի իսաչը կը ճանչնայ որպէս Աստուծոյ զօրութիւնը եւ իմաստութիւնը: Անիկա առ մարդ Աստուծոյ անսահման սիրոյն նշանն է, կ'ըսէ Յովհաննէս առաքեալ: Ուրեմն, հաւատալ Ս. Իսաչին՝ բնակիլ է երկիւղին մէջ, որ կը վերածուի զօրութեանական իմաստութեան. եւ զօրութեանական իմաստութիւնը Աստուծոյ անսահման սիրոյ կամքը կատարելով կ'անի:

ԳՔ

«ՆՈՐ ԾԱՂԻԿ»
ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ
2024-2025 ՏԱՐԵՇՐՉԱՆ



«Նոր Ծաղիկ» Մանկապատանեկան երգչախումբը իր փորձերուն վերսկսաւ Ուրբաթ, 4 Յոկտեմբեր 2024-ին: Փորձերը՝ ամէն Ուրբաթ ժամը 4.30-5.45: Վայր՝ Ս.Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Վերնատուն: Խմբավար՝ տիկ. Գոհար Մանուէլեան: Դաշնակահար՝ տիկ. Դալար Յարպոյեան-Գալլոլեան: Արձանագրուելու համար ինքնաձայնել՝ երեցկին Նինա Չիֆթճեան-Գոյունեանին. 514-945-6174



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱԵՐ ԾԷՆՈՍԻԵՆ

ՀԵՊԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻԵՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՈՒՏԵԱՆԵՐ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Քաղցր ՏԵՐ, անսպասելի ձիւնը այսօր ինձի մտածել տուաւ, թէ որքան զգոյշ պետք է ըլլամ իմ կանխագուշակումներուս մէջ: Երբ ինքզինքս պատրաստած էի զարնան եւ աւելի մեղմ՝ արեւոտ կլիմայի, կարծես ձմեռը վերադարձաւ: Ինձի կարելոր զգուշացում մը չէ՞ որ կու տաս: Միշտ ներկայի կացութիւնս կ'անդրանցուցնեմ

ապագային մէջ: Եթէ մուր զգամ, ապագան մուր կ'երեւի. եթէ լուսաւոր զգամ, ապագան լուսաւոր կ'երեւի: Բայց ո՞վ եմ ես որ գիտնամ թէ կեանքը ինձի համար ինչպէ՞ս պիտի ըլլայ վաղը, գալ շաբաթ, գալ տարի, կամ տասը տարի ետք: Աւելին, ո՞վ եմ ես որ գիտնամ, թէ ո՞վ պիտի ըլլաս ինձի համար եկող տարուան ընթացքին:

Ով ՏԵՐ, քեզ պիտի չարգելափակեմ իմ սահմանափակ եւ սահմանափակող մտքերովս ու զգացումներովս: Որքան գործեր կրնաս կատարել ինձմով, գործեր՝ որոնք ինձի համար ամբողջապէս անկարելի կը թուին: Գէթ կ'ուզեմ բաց մնալ կեանքիս մէջ Յոգիիդ ազատ շարժումներուն: Ինչո՞ւ ինքզինքիս միշտ կ'ըսեմ. «Երբեք սուրբ պիտի չըլլամ: Երբեք պիտի չկարենամ յաղթահարել իմ բնագոյական մղումներս ու ցանկութիւններս»: Եթէ շարունակեմ ասիկա ըսել՝ գուցէ արգելք ըլլամ, որ զիս բուժես եւ խորապէս ներգործես մէջս:

Ով ՏԵՐ, շնորհէ՛ որ ազատ մնամ թոյլատրելու որ գաս երբ եւ ինչպէս որ կը փափաքիս: Ամեն:

(Շար. 25)

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ՏՕՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Շաբաթ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Երեկոյեան ժամը 7.00-8.00

Երգեցողութեամբ՝ Արական Երգչախումբին

